

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՈՐԴՈԲԱՅՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ ԿՈՐԴՈԲԱ

Մայիսի 15-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը ուղեկցությամբ Տ. Ներսես և Տ. Գրիգորիս եպիսկոպոսների, Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի և այլ ուղեկիցների, Մոնտեվիդեոյից մեկնում է Կորդոբա:

Կորդոբան համանուն նահանգի վարչական կենտրոնն է, որը հիմնադրվել է 1573 թ.: Քաղաքի համալսարանը գործում է 1613 թվականից սկսած: Քաղաքի բնակչության քանակը շուրջ 800 հազար է:

Կորդոբայում ապրում և գործում են շուրջ վեց հազար հայեր, որոնք կբաղված են գլխավորապես առևտրով, արհեստներով և ծառայում են ազգային ասպարեզներում: Այստեղ հայերն ունեն եկեղեցի և դպրոց, ինչպես նաև բարեգործական, մշակութային և հայրենակցական միությունների մասնաճյուղեր:

Կորդոբայի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Կորդոբայի հայոց Ս. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ավետիս քահանա Թորոսյանը, Կորդոբայի գաղութային միության վարչության անդամները՝ ղեկավարությամբ նախագահ պրն. Սարգիս Զաքյանի, տեղի հայկական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև բազմաթիվ պետական պաշտոնական անձնավորություններ, այդ թվում՝ Կորդոբայի նահանգապետի ներկայացուցիչ մինիստր Լոնչարիչ Ճրանիչը, Կորդոբայի քաղաքապետի ներկայացուցիչ դոկտ. Ալբերտո Կաստանիան, Քաղաքապետական Խորհրդի խորհրդական Ալեքսանդրո Պալյանը, Սիրիայի կոնսուլ դոկտ. Խորխե Աբդուլ Մուլեքը, Լիբանանի կոնսուլ Էմիլիո Ռեսպեն, արաբական օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչ Դանիել քհն. Բեդրան և այլն:

Օդանավակայանը լցված էր հարյուրավոր հավատացյալ հայերով:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Կորդոբայի հայոց Ս. Գևորգ եկեղեցի, որտեղ բարիգալստյան և ողջույնի հետևյալ խոսքն է արտասանում տեղի հոգևոր հովիվ Տ. Ավետիս քահանա Թորոսյանը:

«Վեհափառ Տեր,

Բացառիկ ուրախության, գոհունակության պահեր է, որ կապրինք այս օրերուն հայտնի պատճառով մը. մեր մեջ ունինք Հայոց Հայրապետը, որ Իր անձին մեջ կխտացնե մեր ազգային և կրոնական արժեքներուն, սրբություններուն ամբողջությունը, և մենք իր մեջ կտեսնենք մեծ Հովվապետը, ազգային արժեքներու պահպանիչը և համայնական Հայրը, որ Իր սրտին մեջ ունի

վեց միլիոնե ավելի հայության մտահոգությունները, ձգտումները և փափագները: Ահա այս պատճառով է, որ ամեն տեղ գրկաբաց կընդունի մեր ժողովուրդը իր հոգևոր Հայրը:

Ես կսքանչանամ մեր ժողովուրդի ավանդապահության, կապվածության և սիրույն՝ հանդեպ Ս. Էջմիածնին և անոր արժանավոր Գահակալին: Զանազան առիթներով, երբ կայցելեմ Կորդոբայի հայ ընտանիքներ, կտեսնեմ, որ իրենց տան ամենագեղեցիկ սենյակին մեջ, պատին վրա, 24 տարիներ առաջ Վեհափառին կողմե Իր մակագրությամբ տրված Ս. Էջմիածնի մեկ նկարը, Վեհափառ Հոր նկարը կամ մեր խաչքարերու նկարներեն մեկը, գեղեցիկ շրջանակով երիվված, ապակի անցված, կպահպանվին խնամքով և հպարտությունը կկպվմեն այդ ընտանիքներուն: Այդ նկարները հիշատակ մը, մասունք մըն են մեր հայրենիքեն, որ մեր կարոտակեզ ժողովուրդի հայրենաբաղձության զգացումները կարտահայտեն, անոր կապվածությունը և սերը հանդեպ մեր դարավոր և հրաշալի Էջմիածնին:

Այս երկրին ամենեն փոքր հայ գաղութը, որու ներկայացուցիչները այսօր մեր մեջն են, Ռոսարիո հայ գաղութը, հավիվ 200 հոգի հաշվող, ամուր կերպով կապված է Ս. Էջմիածնին: Ես այս իրողության իրավեկ եղա, երբ ակամա հոն գտնվեցա տխուր առիթով մը և գացի գերեզմանատուն ու տեսա, որ մահացած հայու մը գերեզմանաքարին վրա Ս. Էջմիածնի պղինձե ձուլված քանդակը կա դրված: Ու ակամա խորհրդածեցի՝ ըսելով. ո՜վ ռոսարիոհայ, ճակատագրի ի՛նչ անողոք հարված քեզ հեռավոր այս նահանգին մեջ նետած է, և ի՛նչ խորհրդավոր, անմեկնելի ուժ մղած է քեզ, դուն, որ հավիվ քանի մը բառ հայերեն գիտես, որպեսզի ձգես քու քաղաքդ և գաս մինչև մայրաքաղաք, գտնես պղնձագործը, հայերեն տառերով Ս. Էջմիածնի պատկերը ձուլես և բերես քու մահացած, չարչարված հորդ գերեզմանին դնես:

Վեհափառ Տեր, հրաշքի համապոր երևույթ մըն է այս, որ ուրիշ գաղութներու մեջ ալ կշարունակվի այսպես: Կհիշեմ հիմա 17-րդ դարու նշանավոր մեր պատմիչը՝ Առաքել Դավրիժեցին, որ կսահմանե Էջմիածնի դերը և կըսե. «Ամենայն ազգն հայոց ի վերայ սրբոյն աջոյն Գրիգորիսի և Ս. Էջմիածնի կապեալ կայ»: Այո՛, ամբողջ հայ ազգը Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Էջմիածնի հետ կապված է: Այս կապվածությունը մինչև այսօր կշարունակվի, և ես համոզումով կկրկնեմ այսօր, թե ի վերա հիշյալ սրբությանց կապյալ կա այսօր կորդոբահայությունը, ռոսարիահայությունը և ամբողջ մեր ժողովուրդը ամեն տեղ աշխարհի վրա հաստատապես և հավիտյան:

Թող հավետ ապրի Ս. Էջմիածինը և մեր հավիտենական ժողովուրդը»:

Այնուհետև օրհնության հետևյալ խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ողջույն ձեզի բոլորիդ, սիրելի հավատացյալներ:

Ես կուգամ Հայաստանեն, Ս. Էջմիածնեն և ձեզի ամենուդ կբերեմ Աստուծո օրհնությունը: Ս. Էջմիածինը ամենայն հայոց հոգևոր կենտրոնն է: Տասնըյոթ դարերե ի վեր կանգուն է և միշտ կենդանի ու այսօր ալ իր հոգևոր ու ազգային առաքելության ճամփուն վրա կգտնվի՝ շրջապատված մեր հայաստանցի ժողովուրդի սիրովը և գուրգուրանքովը: Ս. Էջմիածինը կպատկանի

բոլոր հայերուն հավասարապես, և բոլոր հայերը հարապատ կավակներն են Սուրբ Էջմիածնի: Հայրական սիրով և կարոտով կուգամ ձեր քաղաքը, քսանչորս տարի հետո ձեզի հանդիպելու, ձեզի հետ աղոթելու առ Աստված, որ Տերը միշտ անշարժ և անասան պահե մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին իր Մայր Աթոռով, իր նվիրապետական Աթոռներով, իր ամբողջ ժողովուրդով ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Մենք՝ հայերս, պիտի մնանք միշտ անբաժան մեր Մայր Եկեղեցիով և մայր հայրենիքով: Աստուծո օգնությամբ եր Եկեղեցին պիտի շարունակե կատարել լիությամբ իր հոգևոր առաքելությունը, իր դաստիարակչական առաքելությունը հայ ժողովուրդի կյանքին մեջ, պիտի շարունակե կատարել նաև ի բիայրենանվեր առաքելությունը, այն գիտակցությամբ, որ այսօր մենք վերածնած ազգ ենք ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Հայրենիքի վերածնունդը և վերելքը մեր օրերուն օրե օր ավելի կկարգանա, և մենք համոզված ենք, որ մեր ժողովուրդը պիտի կարդանա նվաճել ապագա նոր հաջողություններ՝ իրականացումովը մեր ազգային արդար երազանքներուն:

Այս զգացումները, այս համոզումները կենդանի կապրին այսօր մեր հայրենաբնակ ժողովուրդի հոգիին մեջ և՛ հոգևոր, և՛ ազգային իմաստով: Վստահ եմ, որ դուք, որ հավատարիմ կավակներն եք մեր Մայր Եկեղեցիին, ձեր սրտերը լայն կբանաք այս ավետիսին, այս ճշմարտություններուն:

Ուրախ եմ, որ կգտնվիմ այս Ս. Գևորգ եկեղեցիին մեջ: Շատ հստակ կտեսնեմ, որ քսանչորս տարի հետո ձեր աղոթքի Տունը ավելի բարեկարգ և ավելի բարեպարդ է թե՛ դուրսեն և թե՛ այստեղ՝ ներսը: Կշնորհավորեմ և կգնահատեմ եկեղեցական իշխանությանց մարմինները, հոգևոր հովիվը, տիկնանց և այլ հանձնաժողովները, որոնք ձեռք-ձեռքի տված՝ շեն, պայծառ և լուսառատ կպահպանեն այս եկեղեցին: Կգնահատեմ նաև այս սրբանկարները, որոնք հայկական մանրանկարչության ոճով արատբերված են և կհիշեցնեն մեզի մեր հին մագաղաթները, մեր հին եկեղեցական արժեքները, որոնք կպահպանվին այսօր դարերեն մեզի մնացած գիրքերու մեջ, մանավանդ Երևանի Մատենադարանին մեջ: Մեր Երևանի Մատենադարանը, ինչպես գիտեք, 12 հազար հին հայկական ձեռագիրներ ունի: Ես մասնավոր ուրախություն կզգամ այստեղ՝ տեսնելով հայկական հին մանրանկարներու վերարտադրումը ձեր եկեղեցվո պատերուն վրա:

Ես արդեն տասնհինգ օր է կգտնվիմ Հարավային Ամերիկայի այս շրջանը, սիրտս լեցուն է բազում ուրախություններով, սքանչելի տպավորություններով իմ այցելած երկիրներու հայ եկեղեցական կյանքեն, կրթական, մշակութային կյանքեն:

Ձեր երկրին մեջ մեծ գոհունակությունը ունեցա մոտեն ճանչնալու ձեր Հանրապետության նոր նախագահը նախ կոնգրեսի բացման օրը, ապա նաև անձնական տեսակցության ժամանակ: Այդ առթիվ հոգեկան մխիթարությամբ լսեցի ձեր նախագահի գնահատանքի խոսքերը Արգենտինայի մեջ ապրող հայերու նկատմամբ: Մեր պատգամն է, որ մեր Եկեղեցվո կավակները աշխարհի ճամփաներու վրա ուր որ ալ գտնվին, ամեն տեղ օրինապահ քաղաքացիներն բլլան իրենց բնակած երկրին և որևէ դժվարություն չպատճառեն երկրի իշխանություններուն՝ կարենան պահել իրենց ավանդությունները, իրենց կրոնական հավատքը, եկեղեցին, իրենց կրթական հաստատությունները և հայրենաբաղձ ոգին Մայր Հայաստանի նկատմամբ:

Այսպիսի ցանկություններով և մաղթանքներով վերստին ձեզի կբերեմ իմ հայրական սերը և օրհնությունները:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամեն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մեքենաների շարասյունով առաջնորդվում է «Կրիլոն» հյուրանոց:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՐԴՈԲԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Նույն օրը, ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Իր շքախմբի, այցելում է Կորդոբա նահանգի նահանգապետ դոկտ. Էդվարդո Անջելոսին: Նորին Սրբության և հարգարժան նահանգապետի միջև տեղի է ունենում զրույց, որն անցնում է բարեկամական և սիրալիր մթնոլորտում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ավելի ուշ, երեկոյան ժամը 21-ին, Կորդոբայի գաղութային վարչության կողմից «Կրիլոն» հյուրանոցի ճաշասրահում մատուցվում է բարիգալստյան ընթրիք՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Հանուն գաղութային վարչության, ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքով հանդես է գալիս վարչության նախագահ պրն. Սարգիս Զաքյանը՝ նշելով.

«Վեհափառ Տեր,

Ուրախության այս պահուն ինձ բաժին կիյնա հայտնել Ձեր Սրբության ամբողջ կորդոբահայ գաղութի վգացած ցնծությունը Ձեզ մեր մեջ ունենալու առթիվ:

Անսահման գոհունակությամբ է, որ կողջունենք Ձեր այցելությունը այս փոքրաթիվ գաղութի մեջ, որ, հակառակ իր աշխարհագրական հեռավոր դիրքին ինչպես մեր հայրենիքեն, այնպես ալ արտասահմանի այլ գաղթավայրերե. միշտ մոտեն կապրի ազգային այն բոլոր հարցերով, որոնք կհուզեն մեր ժողովուրդը ամեն տեղ:

Վեհափառ Տեր, Ձեր այցելությունը կուգա մեզի պարգևելու նոր ուժ և նոր ոգի՝ վառ պահելու համար մեր հավատքը դեպի մեր ժողովուրդի ապագան, շարունակելու մեր պայքարը մեր ազգային նվիրական արժեքներու, մեր ավանդություններու, մեր լեզվի, մեր Եկեղեցվո և ազգային այլ հաստատություններու պահպանման համար:

Առիթը կօգտագործեմ Ձեզ հաղորդակից դարձնելու համար, թե կորդոբահայ գաղութը, որ իր մեջ կհաշվե մշակութային, բարեսիրական, մարզական և այլ ազգային հաստատություններ, իր գոյությունը կպահե միասնական և համերաշխ մթնոլորտի մը մեջ, պարագա մը, որ օրինակելի ազդակ մը հանդիսանալու կոչված է այլ գաղութներու մոտ՝ մեր ազգային նպատակներու իրագործման ճամփուն վրա կատարվող աշխատանքներու հաջողության համար:

Բարիգալստյան մեր այս խոսքերուն հետ կուզեինք հայտնել Ձեզ կորդոբահայության համոզումը երկնային արդարության նկատմամբ, որու իբր գերագույն ներկայացուցիչը Ձեր մեջ կտեսնենք այն անձը, որ իր աղոթքով կդիմե առ բարձրյալն Աստված՝ հայ ժողովուրդի վերջնական համախմբման համար իր հայրենի հարապատ հողին վրա:

Հանդիպում Կորդոբայի նահանգապետ Էդուարդո Անջելոսի հետ

Վեհափառ Տեր, բոլորիս անունեն կուգամ Ձեզի մաղթել քաջառողջություն և երջանիկ կյանք և խնդրել Աստուծմե, որ Ձեր իմաստությամբ և փորձառությամբ դեռ երկար տարիներ շարունակեք առաջնորդել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Ձեր հավատացյալ ժողովուրդը»:

Բարիգալստյան և ողջույնի խոսքեր են արտասանում նաև տեղի հոգևոր հովիվ Տ. Ավետիս քահանա Թորոսյանը, այրն. պրն. Խուան Նուրիհանը, Գևորգ Այվազյանը (Ռոսարիո հայության կողմից) և ուրիշներ:

Վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԸՆԹՐԻՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Ես կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք:

Մեր Տիրոջ՝ Հիսուսի խոսքերն են: «Ես կենդանի եմ և դուք կենդանի պիտի մնաք»:

Սիրելի ժողովուրդ, մենք նոր տոնախմբեցինք Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը, որով կճշմարտվին այս խոսքերը, զոր Քրիստոս արտասանեց իր կյանքի ընթացքին: Հիսուս խաչափայտի վրա իր հոգին ավանդեց, թաղվեցավ, բայց մահվամբ մահը հաղթեց և հարություն առավ ու ապրեցավ և միշտ պիտի ապրի: Բայց Հիսուս ոչ միայն իր անձին համար այս վկայությունը կբերե, այլ նաև բոլոր անոնց համար, որ պիտի հավատան անոր աստվածային առաքելության և պիտի ապրին անոր պատգամներով: Մեր ժողովուրդը, աշխարհի ամենահին քրիստոնյա ազգերեն մեկը, Քրիստոսին ամենահավատարիմ ազգերեն մեկը, իր ամբողջ պատմությամբ, ապացույցը տված է այս ճշմարտության, այսինքն՝ հավատալով Հիսուսին, թեև հաճախ նահատակված, սակայն միշտ իր մահվան գնով մահը հաղթած է, հարություն առած է և վերածնված: Գուցե այս քանի մը վկայություններով կարելի է բնորոշել ամբողջ մեր պատմությունը վերջին մոտ երկու հազար տարվա ընթացքին:

Հիսուս իր գերեզմանեն երեք օր հետո Հարություն առավ, մեր ժողովուրդն ալ 1915-ի նահատակութենեն ուղիղ երեք տարի հետո վերածնունդի նոր ճամփա մը բացավ իր քաջ որդվոց սուրբ արյունով, Սարդարապատի հաղթանակով: Եվ ճակատագիրը հայ ժողովուրդի հիմնովին շրջվեցավ, նոր առավոտ բացվեցավ դարավոր ստրկության շրջանե մը հետո: Վերածնավ մեր ժողովուրդը, նոր հայկական պետություն մը կազմավորվեցավ, որ նոր պայմաններու տակ կգոյատևե ուղիղ ճանապարհով: Հայրենի վերածնունդով վերակենդանացավ նաև սփյուռքի հայությունը՝ թոթափած իր վրայեն անցյալի ողբի, հուսահատության և շփոթություններու շրջանը: Սփյուռքի հայությունը ավելի նպատակասլաց կերպով կկազմակերպե այսօր իր եկեղեցական, կրթական, մշակութային և ազգային կյանքը՝ իր հայացքը հառած դեպի մայր հայրենիք և Սուրբ Էջմիածին, առավել լավատես դեպի մեր ազգի ապագան:

Քիչ առաջ լսեցի տիար Զաքյանի կարդացած ճառը և անգամ մը ևս համոզվեցա, որ իրոք մինչև այս հեռավոր ափերը հայ վերապարթոնքի շունչը կենդանի է և հետզհետե կզարգանա:

Այս վերածնունդի ճանապարհի վրա կվերանորոգվի նաև մեր Առաքելական Մայր Եկեղեցին, որ արտասահմանի մեջ մեր ազգի գոյատևման ամենաուժեղ պատվանդանն է, վեմն է և ոգեշնչող ազդակը: Երկու հազար տարիներ ի վեր, մոտավորապես այն օրերեն, երբ Հայ Եկեղեցին կազմավորվեցավ, ան գրեթե մեր ազգային ամբողջ պատմությունն իր ուսերուն վրա առած՝ բարձր

ու անվտանգ պահեց: Մանավանդ այն շրջաններուն, երբ դարեր շարունակ մեր ժողովուրդը կորսնցուցած էր իր պետականությունը: Բայց այսօր ալ մեր ազգային պետության առկայության պայմաններու մեջ, Հայ Եկեղեցին նորեն իր պատմական, հոգևոր և ազգային առաքելությունը կշարունակե և պետք է շարունակե թե՛ Հայաստանեն ներս և թե՛ արտասահմանի տարածքի վրա: Աստուծմե պարգևված մեծ շնորհ մըն է մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր նվիրապետական Աթոռներով, որ հոգեպես կմիավորե մեր ժողովուրդը, մանավանդ այսօրվա ցիրուցան պայմաններու մեջ և կդարձնե ամբողջ մեր ազգը միաձույլ կանգված մը անբաժանելի ու միասնական, նույն հիմնական նպատակը հետապնդող:

Մեր Եկեղեցիին հիմնական առաքելությունը անշուշտ կրոնական է. մեր ժողովուրդի զավակներու կյանքին հոգևոր շինությունը կենսական նշանակություն ունի ոչ միայն կրոնական իմաստով, այլ նաև բարոյական ու ազգային: Մեր ազգի բարոյական ըմբռնումները, առաքինությունները, ընտանեկան սրբությունը, հոգեբանությունը, ազգային դիմագիծը պայմանավորված են մեր քրիստոնեական հավատքով: Ես, իբրև առաջին սպասավորը մեր Եկեղեցվո, այս գիտակցությամբ կգործեմ:

Այսօր Ս. Էջմիածինը կգտնվի իր հոգևոր և ազգային առաքելության ուղիղ ճամփուն վրա: Այս վերջին 28 տարիներու ընթացքին, իմ գահակալության շրջանին, շնորհիվ ստեղծված բարենպաստ պայմաններուն, շնորհիվ Հայաստանի պետական իշխանությանց բարյացակամ վերաբերմունքին, շնորհիվ նաև իմ գործակիցներուն և մեր ժողովուրդի սիրույն ու հոգատարության դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը թե՛ Հայաստանեն ներս և թե՛ Հայաստանեն դուրս, Էջմիածինը և ընդհանրապես Հայաստանի շատ եկեղեցիներ, վանքեր վերանորոգվեցան, վերաշինվեցան, բարեկարգվեցան ի մխիթարություն բոլորիս:

Կրնամ վկայել ձեզի, որ կրոնական վերանորոգման շրջան մը կապրի հայաստանցի ժողովուրդը: Իրողություն է, որ մեր ժողովուրդի սրտին մեջ արթնցավ հոգեկան մղումը դեպի Ավետարանի հավիտենական ճշմարտությունները: Անգամ մը ևս կապացուցվի մեր կյանքի փորձով, որ մարդ ոչ միայն հացով կապրի, այլ նաև խոսքովը Աստուծո:

Մեր ժողովուրդը քրիստոնյա եղած է և պիտի մնա: Կմնա, որ նաև արտասահմանի տարածքի վրա մենք հետզհետե ավելի ամուր հիմքերու վրա կպրմակերպենք մեր հոգևոր, ազգային կյանքը իբրև քրիստոնյա ժողովուրդ, իբրև եկեղեցական, կրոնական համայնք: Այս վերջին քանի մը տարիներուն, երջանիկ եմ հաստատելու, որ այդ տեսակետեն շատ ավելի բարելավվեցավ եկեղեցական կյանքը Հարավային Ամերիկայի այս երկիրներուն մեջ, հատկապես Արգենտինայի, որ նոր ժրաջան թեմակալ առաջնորդ մը ունի, որ այդ ոգիով դաստիարակված է և որ իր շուրջը ունի արժանավոր հոգևոր ծառայողներ: Դուք այստեղ արժանավոր հոգևոր հովիվ մը ունիք՝ հայր Ավետիսը: Իր խոսքերեն քիչ առաջ հաստատեցի, որ նույն ոգեշնչումով կաշխատի, նվիրումով ու լավատեսությամբ: Անշուշտ ես մեծապես կգնահատեմ նաև այն բարենպաստ պայմանները, որոնց մեջ դուք կապրիք իբրև հայ համայնք, իբրև եկեղեցական, կրթական, մշակութային, բարեսիրական միություններ, շնորհիվ արգենտինյան պետական իշխանության անվերապահ, հայասեր վերաբերմունքին:

Իմ կողմե կրկին անգամ իմ երախտագիտությունը կհայտնեմ արգենտինյան իշխանությանց հանուն Հայաստանյայց Եկեղեցվո: Նաև շնորհակալական իմ խոսքը բոլորիդ, որ այնքան սիրով և ջերմությամբ վերստին ընդունեցիք Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Մասնավոր շնորհակալություն ձեր Եկեղեցական

Համայնքային Վարչության, Ընդունելության Հանձնաժողովին, Տիկնանց Միության և բոլոր այն հանձնաժողովներուն, միություններուն, որոնք կգտնվին այստեղ և կշրջապատեն զիս սիրով և հարգանքով:

Թող Աստված ձեզ պահե պահպանե քաջառողջ, անվտանգ, երջանիկ ձեր ընտանեկան հարկերու տակ, բարի գործոց հաջողություններով:

Կեցցե՛ աստվածասեր այս երկիրը՝ Արգենտինան և համայն արգենտինյան ժողովուրդը:

Ճաշկերույթը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:

ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՄԱՐՏԻԿ ՍԱՆ ՄԱՐՏԻՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Մայիսի 16-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Իր շքախմբի և գաղութային վարչության անդամների, այցելում է Արգենտինայի ազատարար և ազգային հերոս Սան Մարտինի հուշարձանին և ծաղկեպսակ վետեղում այնտեղ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԽՈՐԴՈԲԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ՌԱՈՒԼ ՊՐԻՄԱՏԵՍՏԱՅԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս Կորդոբայի արքեպիսկոպոս կարդինալ Ռաուլ Պրիմատեստային: Նորին Սրբությանն և կարդինալ Ռաուլ Պրիմատեստայի միջև տեղի է ունենում ջերմ և սրտագին զրույց՝ էկումենիկ ոգով:

ԱՅՑ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Նույն օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Կորդոբայի քաղաքապետարան և հանդիպում ունենում քաղաքագլուխ դոկտ. Մեստրեյի հետ: Հանդիպումն անցնում է բարեկամական սիրալիր մթնոլորտում:

Այնուհետև Նորին Սրբությունը ընդունում է քաղաքապետական խորհրդի նախագահ Ֆերնանդո Մոնտոժային:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ «Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Ս. Գևորգ եկեղեցուն կից «Ս. Սահակ-Մեսրոպ» վարժարան և հանդիպում ունենում վարժարանի սաների և ուսուցիչների հետ:

Գեղարվեստական ծրագրով հանդես են գալիս վարժարանի սաները՝ արտասանելով և երգելով ազգային-հայրենասիրական բանաստեղծություններ ու երգեր:

Հանդիսության ավարտին Իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը:

Կորդոբայի Սան Մարտինի արձանի առջև

Վեհափառ Հայրապետը Կորդոբայի քաղաքապետարանի խորհրդականների հետ

Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Կորդոբայի «Ս. Սահակ-Մեսրոպ» վարժարանի աշակերտ-աշակերտուհիներով

Նորին Սրբությունը, ինչպես ամեն անգամ արտասահմանում կրթական հաստատություններ և վարժարաններ այցելելիս, այս անգամ ևս շեշտում է հայկական դպրոցների կարևորությունը սփյուռքի պայմաններում՝ նշելով, որ հայկական դպրոցներում է, որ վառ են պահվում հայոց լեզվի սերն ու հայրենի հավատքը հայ մանկանց հոգիներում: Վեհափառ Հայրապետը նշում է նաև, որ առանց հայերեն լեզվի իմացության և հայրենի հավատքի պահպանման՝ սփյուռքի հայությունը կոտարանա և կձուլվի:

Այս առթիվ Նորին Սրբությունը դպրոցի աշակերտությանը բաշխում է Ս. Էջմիածնի նշաններ և դպրոցի տնօրենությանն է հանձնում Արարատի ու Ս. Էջմիածնի գունավոր մեծադիր նկարները:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԱԿՈՒՄԲ

Նույն օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Բարեգործականի ակումբ և կատարում Հ. Բ. Ը. Միության նոր կառուցվելիք շենքի հիմնարկեքը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՁՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ԱԿՈՒՄԲ

Նույն օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է զորավար Անդրանիկի անվան ակումբ:

Ակումբում բարիգալատյան խոսքով հանդես է գալիս պրն. Մելքոն Պոյաճյանը: Հ. Օ. Մ.-ի անունից ելույթ է ունենում տիկին Գեղանուշ Ասատուրյանը:

Վերջում Նորին Սրբությունը կատարում է հոգեհանգիստ զորավար Անդրանիկի անվան ակումբում թաղված ազգային հերոս Արամ Երկանյանի հոգու խաղաղության համար:

ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ «ԿՐԻԼՈՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, «Կրիլոն» հյուրանոցում տեղի է ունենում մամուլի ասուլիս Վեհափառ Հայրապետի հետ: Ասուլիսին մասնակցում էին տեղական բազմաթիվ թերթերի թղթակիցներ, ինչպես նաև ռադիոյի և հեռուստատեսության աշխատակիցներ:

Նորին Սրբությունը սիրով և անձանձրույթ պատասխանում է թղթակիցների բոլոր հարցերին և վեր հանում Ս. Էջմիածնի դերը հայ ժողովրդի դարավոր պատմության ընթացքում:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ «ՊԱՔՐՃՅԱՆ» ՍՐԱՀՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Ս. Գևորգ եկեղեցուն կից «Պաքրճյան» սրահում գաղութային վարչության կողմից տրվում է ճոխ ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին մասնակցում էին շուրջ 400 հրավիրյալներ: Ներկա էին՝ Տ. Ներսես, Տ. Գրիգորիս եպիսկոպոսները, Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը, Տ. Ավետիս քահանա Թորոսյանը, գաղութային վարչության անդամները՝ գլխավորությամբ վարչության նախագահ պրն. Սարգիս Զաքյանի, ինչպես նաև գաղութի հայկական զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես է գալիս տեղի հոգևոր հովիվ Տ. Ավետիս քահանա Թորոսյանը:

Հ. Բ. Ը. Միության անունից ելույթ է ունենում պրն. Արթին Պըլըքյանը՝ ողջունելով Հայոց Հայրապետի ներկայությունը հետևյալ սրտագին խոսքով.

«Վեհափառ Տեր,

Կորդոբահայ գաղութը այսօր կապրի հավաքական խանդավառության և ուրախության պատմական անմոռանալի օր մը: Մեկ այցելելու Ձեր այս երջանիկ որոշումը ոչ միայն աննախընթաց առիթ մը կհանդիսանա բոլորիս համար անխտիր հարգելու, մեծարելու և հայտնելու Ձեզ մեր շնորհակալությունները որպես Հայաստանյայց Եկեղեցու մեծարժան հոգևոր պետի, այլև, անտարակույս, իր կորավոր ազդեցությունը պիտի ունենա վերարծարծելու մեր հայրենասիրական զգացումները և բարձրացնելու մեր ազգային գիտակցությունը:

Հ. Բ. Ը. Միության Կորդոբայի մասնաճյուղի անունով Ձեզ կներկայացնեմ վարչությանս անդամներուն և մեր բոլորին հարգալից ողջույնները՝ բարի գալուստ մաղթելով Ձերդ Սրբության: Կորդոբայի այս փոքրաթիվ գաղութին տված Ձեր այցելությամբ Դուք թանկագին առիթ մը կպարգևեք մեզի, որպեսզի ոգևորվինք և հուզվինք հեռավոր մեր հայրենիքին հանդեպ կարոտի և սիրո զգացումներով, որպեսզի վերանորոգվի մեր սերը դեպի մեր մշակույթը, մեր լեզուն, մեր կրոնը, մեր ազգային անգնահատելի արժեքները և, վերջապես, որպեսզի ամրապնդվի բոլորիս մտքերուն մեջ մեկզմեկու հարազատ եղբայրներ ըլլալու գիտակցությունը և մեր վճռականությունը միասնաբար և համերաշխ կերպով շարունակելու մեր ազնիվ պայքարը՝ պահել-պահպանելու համար մեր Եկեղեցին, մեր դպրոցը, կրթական, բարեսիրական և ընկերային մեր զանազան հաստատությունները ու մանավանդ մեր ազգային ոգին:

Ընդունեցեք, Վեհափառ Տեր, մեր բոլորի խորագգաց շնորհակալությունները: Միշտ պիտի հիշենք Ձեզ երկյուղած հարգանքով և երախտագիտությամբ, պիտի ներշնչվինք Ձեր հորդորներով և բարի խորհուրդներով, որպեսզի, ինչպես անմար կրակ, մեր սրտերուն մեջ միշտ վառ մնա և փոխանցվի մեր հաջորդ սերունդներուն մեր սերը դեպի մեր մայր հայրենիքը՝ մեր անմահ և անմոռանալի Հայաստանը»:

Այնուհետև Թեքեյան Մշակութային Միության անունից Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցը Կորդոբայի հայությանը հետևյալ սրտագին խոսքով ողջունում է պրն. Կայծակ Տեր-Հակոբյանը.

«Վեհափառ Տեր,

Հանուն Թեքեյան Մշակութային Միության սիրով ու հարգանքով կողջունենք Ձերդ Սրբության օրհնաբեր ներկայությունը մեր մեջ:

Ձեր գալուստը հեռավոր այս ափերը անսահման ուրախությամբ ու խանդավառությամբ կհամակե հայոց սրտերը: Դուք կբերեք մեզի մեր հայրենի հարազատ ժողովուրդին սերն ու կարոտը ու մանավանդ Ս. Էջմիածնի անսահման հավատքը:

Հայ ժողովուրդը իր պատմության ամենամռայլ օրերուն իր միակ ապավենը նկատեց Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցին, որուն շնորհիվ ան ապահովեց իր գոյությունը մինչև այսօր: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եղավ ամրակուռ բերդը հայ մշակույթի ու ավանդությանց և անխորտակելի հավատքն ու ապրելու կամքը հայ ժողովուրդին:

Վեհափառ Տեր, Ձեր շնորհաբեր այս այցելությամբ Դուք ավելի կամրա-

պնդեք սիրուքի և հայրենի ժողովուրդի միջև հոգեկան կապը, որ մեզ կվրե անմնացորդ նվիրումով ծառայելու հայ ժողովուրդի վեհ նպատակներուն:

Աստուծմե կհայցենք, որ անսասան պահե հայոց հավատքի բազմադարյան կեդրոն Ս. Էջմիածինը և երկար քառասողջ կյանք պարգևե Ձերդ Սրբության, որպեսզի կարենաք դեռ երկար տարիներ գահակալել Լուսավորչի Աթոռին վրա»:

Ճաշկերույթի ընթացքում խոսք է առնում նաև պրն. Ռուբեն Առաքելյանը՝ նշելով.

«Վեհափառ Տեր,

Կորդոբահայությունը այսօր ուրախության և ցնծության օրեր կապրի՝ իր մեջ ունենալով Ձերդ Սրբությունը, որուն բարի գալուստ կմաղթենք սրտանց:

Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքին ունեցած է քաղաքական բազում ելևէջներ և փորձություններ: Երբ ան կորսնցուցած է իր թագավորությունն ու անկախությունը, Հայ Եկեղեցին է պաշտպան կանգնած հայ ժողովուրդին:

Հայ Եկեղեցվո պատմությունը հարուստ է նշանավոր դեմքերով՝ Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Ս. Մովսես Խորենացի, Ս. Գրիգոր Նարեկացի, Խրիմյան Հայրիկ և շատ այլ հոգևորականներ, որոնք անձնվիրաբար ծառայած են հայ դպրության և հայ ժողովուրդի ազատագրության: Այսօր հպարտանքով կրնանք ըսել, որ Լուսավորչի գահին վրա ունինք մեր Վեհափառ Վազգեն Առաջինը, որ արժանավոր հաջորդն է մեր եռամեծ հայրապետներուն և Իր գործունեությամբ կհանդիսանա մարմնացումը խաղաղության և շինարարության: Անցնող 28 տարիներու ընթացքին ան կրցավ դարերու հնություն ունեցող շատ վանքեր ու եկեղեցիներ վերանորոգել և վերականգնել: Կհայցենք Աստուծմե, որ ան երկար կյանք ունենա, որպեսզի շարունակե իր այս սրբազան գործը:

Վեհափառ Տեր, այս առթիվ սրտանց կողջունենք նաև Հայաստանի հայությունը, որ վերջին 60 և ավելի տարիներու ընթացքին աշխարհ մը դժվարություններ և ծանր փորձություններ հաղթահարելով՝ գերմարդկային կոհողություններ հանձն առավ հայրենիքի պահպանման և վերաշինության համար, բազմապատկեց իր համրանքը, պատվաբեր նվաճումներ արձանագրեց գիտության և մշակույթի մարզերուն մեջ և հայոց պատմության ձայնին ուսկընդիր՝ հնարավոր բոլոր միջոցներով կջանա ամրացնել մեր այսօրվա գոյության խարիսխները հայության լուսապայծառ ապագայի կերտման հեռանկարով:

Վեհափառ Տեր, մոտ ժամանակեն պիտի վերադառնաք մայր հայրենիք. մեր հայրենի ժողովուրդին մոտ թարգմանը հանդիսացեք սիրուքի հայության սիրույն, կարոտին, հույսերուն և դարավոր երազանքներուն: Կմաղթենք Ձեզի բարի ճանապարհ, երկար կյանք, որպեսզի Լուսավորչի կանթեղը միշտ վառ մնա Սուրբ Էջմիածնա մեջ»:

Վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Հոգի առաւել է, քան կմարմին»: «Հոգին է կենդանարար»:

Սուրբ Ավետարանի խոսքերն են: Հոգին ավելի է, քան մարմինը և հոգին է կենդանություն, կյանք տվողը: Ավետարանի այս ճշմարտությունը հավիտե-

նապես ի վորու է բոլոր ժամանակներուն համար: Այդ խոսքերը արտասանված են երկու հազար տարի առաջ, բայց այսօր ալ իրենց այժմեությունը կպահեն, քանի որ մարդ արարածը կբնորոշվի առավելապես իր հոգիով, իր հոգեկան ներաշխարհով, կրնանք ըսել՝ իր հոգեկան տիեզերքով: Հոգին ալ, իրոք, տիեզերքի անսահմանություն ունի, ինչպես նյութական տիեզերքը, որու մասին հիմա դուք շատ բան գիտեք, որովհետև գիտությունը շատ հառաջացած է, և գրեթե գաղտնիք չկա նյութական տիեզերքի մասին: Բայց այդ նյութական տիեզերքին մեջ հոգին ալ այլ տիեզերք մըն է՝ ուրիշ որակի, և մարդու հայացքով դիտված՝ նույնիսկ ամբողջ նյութական տիեզերքը՝ իմաստ, նշանակություն, նպատակ կտանա մարդկային հոգեկան տիեզերքի միջոցով: Մարդն է, որ իր հոգեկան, իմացական կարողություններով այսօր կհասնի մինչև տիեզերքի անհունները: Այնպես որ այս իմաստով սխալ չէ ըսել, որ ամբողջ տիեզերքի կեդրոնը նորեն մարդը կմնա իր հոգիով: Եվ մեր քրիստոնեական հավատքը հատկապես այդ հոգիի մասին է որ կխոսի, այդ հոգին մեկի ճանչցնել կուտա և այդ հոգիի միջոցավ է, որ կարժևորե մարդկային կյանքը, աշխարհը, պատմությունը: Եվ ավելին, այդ հոգիի ճանապարհով է, որ կբացվի հույսի ճամփան հավիտենական կյանքի:

Սիրելի ժողովուրդ, դուք հայ քրիստոնյաներ եք և ձեր հոգեկան ներաշխարհի մղումով է, որ իրարու կմիանաք իբրև Հայ Եկեղեցվո զավակներ, միասին կապրիք իբրև համայնք և այս պահուն հավաքված եք ձեր Կաթողիկոսին շուրջ, որ ինքն ալ այդ հոգիի մղումով է, որ Էջմիածնեն ճամփա ելավ և եկավ մինչև ձեզի: Այդ հոգեկան հրաշքն է, որ կբնորոշե նաև մեր հայկական կյանքը: Անշուշտ գիտությունը մեր օրերուն շատ զարգացած է: Գիտությունը նյութական աշխարհի գիտելիքներու ամբողջությունն է, որ իրապես հոյակապ հառաջդիմության մեջ է: Բայց ատիկա նյութական տիեզերքին, նյութական աշխարհին կվերաբերի, որուն առարկություն չունինք: Երբեմն կան կրոնականներ, որոնք կըսեն. մարդկային գիտությունը, գիտելիքները մեկ կողմ, մենք չենք ընդունիր կանոնք, միայն Սուրբ Գիրքը կդավանինք: Ես այդ տեսակետը չունիմ: Ես գիտությունն ալ կընդունիմ, որովհետև նյութական աշխարհն ալ Աստված է ստեղծած: Հետևաբար բոլոր գիտնականները, որոնք նյութական տիեզերքը կուսումնասիրեն, բնավ չեն հակադրվիր ո՛չ Աստուծո, ո՛չ ալ հոգեկան ճշմարտություններու: Իսկական գիտնականները, իսկական գիտությունը պարզապես կհայտնաբերեն Աստուծո ստեղծած օրենքները, տիեզերքի օրինաչափությունները և հետևաբար կհաստատեն կրոնական ճշմարտությունները: Կվերադառնամ իմ առաջին մտքին, Ավետարանի խոսքին հոգիի մասին, որ կբնորոշե մարդկային կյանքը, իմաստ, արժեք, նպատակ կուտա մարդու կյանքին: Հոգին ալ նույնքան իրական է, ինչքան նյութական աշխարհը: Եվ հոգի ըսելով՝ չենք հասկնար միայն անհատական մարդու հոգին: Բնական է, ամեն մարդ անհատ ունի այդ հոգին, կկրե այդ հոգին իր մեջ: Բայց կարելի է խոսիլ նաև հավաքականության հոգիի մասին, որովհետև մարդիկ մինակ չեն ապրիր Ռոբինզոն Կրուզոյի պես: Ընկերային, հավաքական կյանքի մեջ, ազգային կյանքի մեջ նոր հոգի մըն ալ կստեղծվի՝ ինքնուրույն հատկանիշներով, նոր մակարդակով, նոր որակով, ուր անհատական հոգիները կմիանան և կկազմեն հավաքական հոգին: Գիտական իմաստով իսկ կարելի է խոսիլ՝ անգլիացի ժողովուրդի հոգեբանության, հոգիին մասին, սպանացի ժողովուրդի հոգիին մասին, հայ ժողովուրդի հոգիին մասին: Եվ հավաքական ազգային կյանքի մեջ հոգիները կմիանան ոչ թե լոկ թվաբանական գումարումով: Թվաբանության մեջ երկու առավել երկու՝ հավասար է չորսի, բայց հոգեկան մարդկային աշ-

խարիի մեջ երկու մարդ առավել երկու մարդ՝ հավասար չէ չորս մարդու, այլ՝ շատ ավելի: Երբ մարդիկ իրարու հետ կմիանան, անոնց հոգիներու գումարը շատ ավելի է, քան թե թվաբանական գումարը: Եվ այս իրողությունը կարծեք թե առավել կճշմարտվի մեր ազգի կյանքին մեջ: Մենք երևի ի վերուստ Ասթե առավել կճշմարտվի մեր ազգի կյանքին մեջ: Մենք երևի ի վերուստ Աստուծմե շնորհված կարողություն մը ունինք՝ այս ճշմարտությունը դրսևորելու մեր կյանքին մեջ, մեր պատմության մեջ: Շատ անգամ փոքր թվով կարողացած ենք իրագործել մեծ հաջողություններ, մեծ հաղթանակներ: Եվ այդ բոլորը հոգեկան ուժերու միացումով է, որ ստեղծված է:

Սկիզբեն ի վեր, քրիստոնեությունը ընդունելեն հետո մանավանդ, հայ ժողովուրդի հոգեկան ուժերը պայծառակերպվեցան, աճեցան, բազմապատկվեցան և ստեղծարար հզոր ուժի մը վերածվեցան: Այդպես է, որ քրիստոնեությունը ընդունելեն ոչ շատ անց՝ մեր ժողովուրդը ստեղծեց իր գիրն ու գրականությունը, Ս. Գիրքը թարգմանեց: Ինչի՞ արդյունք էր Ս. Գրքի թարգմանությունը, եթե ոչ հայ հավաքական հոգիի հանճարի արտացոլման, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գործի մեջ: Վարդանանց հերոսամարտը նույնպես հայոց հավաքական հոգիի արտահայտությունն էր:

Եվ այսպես կրնանք մեր ամբողջ պատմության ճանապարհին այս հայ հոգիի ստեղծագործության մասին խոսիլ: Սարդարապատի ճակատամարտը, որ հիշվեցավ այսօր քանի մը անգամ ակումբներու մեջ, նույնպես հայոց ազգային հոգեկան սխրանքը կիանդիսանա: Հայ զորքը ավելի տկար կինված էր, նվազ մասնագետ հրամանատարներ ուներ, բավարար սնունդ չուներ, զինվորներեն ոմանք նույնիսկ ոտաբոբիկ էին: Մինչդեռ թշնամին շատ ավելի բազմամարդ, շատ ավելի զինված, շատ ավելի պատրաստված էր: Բայց հրաշք պատահեցավ: Հայերը հաղթեցին իրենց հավաքական հոգեկան ուժով: Հայաստանի մեջ առիթներ ունեցած եմ խոսելու Սարդարապատի ճակատամարտին մասնակցած անձերու հետ: Անոնք կվկայեն՝ «Մենք ալ զարմացանք, թե ինչպես հաղթեցինք»: Բոլոր թվաբանական, ռազմագիտական հաշիվներով հայերը պետք է պարտվեին, սակայն հաղթանակը հայերը տարին, որովհետև հայոց ազգային հավաքական հոգին էր, որ գործեց խորհրդավոր կերպով, հրաշալի կերպով: Այդպես է, որ հայ ժողովուրդը իր ճակատագիրը շրջեց և դեպի մայիսյան լուսաբացը հառաջ ընթացավ:

Այսօրվա Հայաստանը մինչև 60 տարի առաջ ողբի և որբի հայրենիք էր: Նույնիսկ մինչև 1922—23 թվականները Երևանի մեջ անտուն-անտեր թափառող որբեր կային, և սակայն մեր ժողովուրդը քով-քովի գալով՝ նոր հավատքով, հերոսական ձիգերով կարողացավ իր վերքերը բուժել և իր նոր կյանքը ստեղծել: Այսօրվա Երևանը արյուն-քրտինքով ստեղծված է և սիրով կառուցված է: Այսօր մենք հպարտ ենք Երևանով, որովհետև Երևանը հայկական քաղաք մըն է ազգային ճարտարապետության շունչով: Հայաստանի վերաշինությունը և ծաղկումը նույնպես հրաշքի համարժեք երևույթներ եղան, տեսակ մը Սարդարապատի հաղթանակի շարունակությունը, խաղաղության պայմաններու մեջ, նույնպես հայոց հավաքական հոգիի դրսևորումներ: Մենք կհավատանք մեր ժողովուրդի հավաքական հոգիի զորության: Գաղտնիք մը կա մեր ժողովուրդի կյանքին ու պատմության մեջ՝ բոլոր դժվարությունները հաղթելու և գոյատևելու, ապրելու և ստեղծագործելու:

Ես այդ հոգին կտեսնեմ նաև ձեր մեջ, ինչպես Բուենոս Այրեսի մեջ ալ տեսա: Դուք ևս ամբողջ հայ ժողովուրդի հոգիի արտահայտությունը կներկայացնեք ձեր պայմաններուն մեջ, ձեր եկեղեցիով, դպրոցով, միություններով, հավատավոր գործունեությամբ: Իրապես հրաշալի պատկերի մը առաջ գտնվե-

ցա ես՝ բաղդատելով այսօրվա վիճակը 1960-ի հետ: Խոստովանիմ մեղքս. Բուենոս Այրեսի մեջ ըսի, որ Կոլոդոբա չեմ կրնար երթալ: Բայց ինձի ըսին՝ չէ՛, Վեհափառ, անհարմար է: Արդ՝ շատ գոհ եմ, որ եկա: Ընդունեցեք իմ անկեղծ գնահատանքը: Ձեզի բոլորիդ իմ գնահատանքը և սերը, հատկապես ձեր եկեղեցական ազգային մարմիններուն և ձեր միություններուն, որոնց ակումբները ես այցելեցի: Իմ սերն ու գնահատանքը ձեր հոգևոր առաջնորդ սրբազանին և ձեր հոգևոր հովիվ հայր Ավետիսին:

Կուզեմ ի մասնավորի ընդգծել և գնահատել միասնական այն ոգին, որ ստեղծված է այստեղ և որ արտահայտվեցավ առավելապես իմ այցելության առիթով: Այդ ալ հայկական հոգեբանության դրական կողմերեն մեկն է: Ակումբներու կամ միություններու թիվը կրնա շատ ըլլալ, բայց կարևոր առիթներով անոնք պետք է միանան, միասին ծրագրեն և միասնաբար աշխատին: Ես ուրիշ անգամ ալ ըսած եմ. ամբողջ մեր գաղթաշխարհի հայությունը պետք է հիմնական չորս տոներու շուրջ համախմբվի և կանոնք միասնաբար տոնախմբեն: Այդ չորս տոներն են՝ Վարդանանց պատերազմի հիշատակը, Ապրիլի 24-ը՝ մեր նահատակներու սուրբ հիշատակը, Սարդարապատի ճակատամարտը և Թարգմանչաց՝ հայ մշակույթի տոնը: Մանավանդ այս չորս տարեթիվերը կմարմնացնեն ամբողջապես համայն հայ ժողովուրդի հավաքական գիտակցությունը և ոգին:

Պիտի բաժնվիմ ձեզմե սիրով և, վստահ եղեք, միշտ պիտի հիշեմ ձեզ: Մասնավոր շնորհակալություն ակնիվ տանտիկիններուն, որոնք այսօրվա համեղ կերակուրները պատրաստեցին: Այդ կերակուրներուն համն ալ չպիտի մոռնամ:

Մնացեք բարով, մնացեք խաղաղությամբ, և Աստված ձեզ օրհնե ու պարգևե բոլորիդ ուժ, եռանդ, կարողություն, որպեսզի բարձր հնչե «Արմենիա» անունը այս հյուրընկալ երկրին մեջ և բարձր շողա ու ճառագայթե միշտ ձեր եկեղեցվո գմբեթի դեպի երկինք բարձրացած հայկական խաչը: